# ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ

## Ա

Սրծաթափայլքն 'ի գաւառս՝ ուր պորփիւրեայ են վէմքն,
Իբրև ըղձիւս անկարօտս՝ անհոգ արքայն յանդորրու
Պատեալ խորիւ՝ զոր ըղխեալ 'ի բաց խորխատումն իւր բանայ,
Ի ծիրանին տիւրացի կայ պարուրեալ մեղկօրէն։
Ընդ սալայարկ աստիճանս առիւծինք կըրկնակի՝
Օձոցն 'ի դէպ պատահեալք՝ զինչ պատուանդան են ոտիցն։
Պահակապանք սակրաւորք կան միշտ 'ի պահ ըղնովաւ
Եւ բազմամբոխ ծառայից 'ի գնացս հընչեն արքունիք։
Կամարակապ 'ի գաւթին անթիւ զօրաց գումարտակք
Ի կոփ տիգացն երկաթի զյատակ գաւթին դըղըրդեն։

Ահաւասիկ ահ ընդ ահ ազգաց և՝ ազանց Նըւիրակք
Ըղտուրս և զհարկ քաղաքաց լընուն խըռնեն առ ոտիւքն,
Եւ անբարբառք հանդէպ իւր խոնարհազին գնան յառաջ.
Ահիւ մածեալք մոռանան համայն զերկիւղ աստուածոց.
Ժողովըրդոց 'ի կապուտ խըծկին զանձուցն իւրոց դէզք։
Անդ բիւր անօթք կան լըցեալ 'ի ձոյլս ոսկւոյ փայլ 'ի փայլ,
Եւ բիւրաւորք արծաթիք արքայակերպ 'ի դըրուագս.
Ասուիք երկիցըս ներկեալ կան տարածեալ առաջի,
Եւ խայտաբղէտ գազանաց վագերց և՝ ընձուց կողոպուտ,
Լիբէական ջայլեմանց փետուրք չքնաղ մեծազինք,
Արկեղք փայտից ցանկալիք, ծիրանածուէն պատմուճանք,
Ի՝ ականակուռ 'ի բաժակս մարգըրտայեռ անդ մանեակք։
Անդուստ եկեալ յառաջէն փերևեթեալ պերճանօք
Մանկանց 'ի ձեռս երիվարք անապատի սանձակոծք,
Յաւազակոյտն ովկիան արագաթռիչ յարշաւանս
Երագասահ փոթորկաց յաղթել 'ի վազս իսկ տոտակք։
Անդ ճօճ 'ի ճեմ՝ և ուղտուց երկայնավիզ գումարտակք,
Մածանելով ընդ ձեռամբ ուղտապանաց ըղպախուրցս,
Հեծեծագին ընդ բեռամբ փըղոսկրէից և իւղոց։
Ծանրադանդաղ անդ և փիղք՝ ժայռքն ապալեր մարդաբերձ,
Կազմք 'ի գոչիւն շեփորաց, և՝ 'ի ձայն փողոյ և Թըմբկաց
Ածել տանել ըղմարտիկս աշտարակօք 'ի պայքար.
Յորժամ արքայ կամեսցի զարդարութիւն կամ ըղփառս
Իւր ցուցանել, և կըցէ կապել ըզսուր իւր յաղթեր։
Զի արքայի է երկիր. մարգագետինք և այլք
'Ի իւրում ձեռամբ ըսպառեն զընդերս իւրեանց բեղնաւորս.
Հարկատու է ամենայն թագաւորին 'ի հեշտանս.
Կեանք ամենից՝ զխորխատութիւնն է 'ի հաճել կամ ըղսիրտ։
Ի պերճութիւն արքայի խաւարամած այլք հողոյ



digitised by A.R.A.R.@

Ոսկի պըղինձ ընձեռեն անարգ ձեռին խուզողաց·
Ծով առաջի իւր սըփռէ ըզմարգարիտ, ջուրց գոհարս·
Երիվարաց լայնին լանջք 'ի սպաս կառացն ընթացից·
Արբեալ զերկնից աստեղաց գիշերաշող զարտասուս՝
Ծաղկեն նարդոս և հալուէ 'ի զարդ 'ի բոյրս անօթոց·
Եւ այգեստանք Ենգադդեայ ըլնկեն անոյշ ըզհընձանս
Երեկորին 'ի յարքունիս առատ առնել զօշարակ։
Վասն իւր միայն՝ 'ի լընուլ զցըռկանաւսն և զըղեակս՝
Դառըն երկամբք բանան մարք զարգանդ իւրեանց 'ի ծընունդ·

Դիտէ արքայ 'ի բարձուստ՝ հարկահանաց զամբոխ մեծ
Ըզգահոյիցն իւր պըճնել սանդղամատունս անշըշունջ,
Եւ մեղմաքայլ 'ի բացեայ մեկնել զորեարն 'ի գանձուց,
Շեղջակուտեալ դէզդէզ մըթերելոց եա ընդ եա.
Եւ 'ի մարդիկ ակնարկեալ խրոխտ հայեցիւք քամահէ։

Այսպէս 'ի լեառըն բարձու յամրակառոյց հանգըստեան
Կայ կարկառեալ ընդ հովիտս Սիլովէին աշտարակ,
Ահեղախրոխտ ճակատուն քանդակակերտ կընճռանօք,
Մինչ արեգակն 'ի կարճել լուսազարդեալ ուղխօրէն՝
Ըզթիկնամէջսն արաստոյ յոսկի կարմիր գեղերփնէ.
Եւ առաջի իւր պարզլին երամ երամ դասք հօտի,
Վըտառք գառանց և ուլուց՝ յարքունիս յարօտ երթալով,
Կոր 'ի գըլուխ փոշեկիցք, աչք կիսաբացք 'ի թըմբիր,
Հեղձամըղձուկք ոգեսպառք ընդ բոցակէզն այն օդովք,
Զի հարկ հովուին է ճեպել տակաւ զընթացսն յամրաքայլ,
Համայն զոլով աղբերն հուպ ծարաւահիւծ պապակեալք։

Սապէս 'ի խրոխտ հանգըստեան՝ ոյր խէթ տաղտուկ է ևեթ,
Համարելով զազգն ողջոյն՝ երկըրպագուս հանդէպ իւր,
Թագաւորէր Հերովդէս. ն՝ ահա հրեշտակ հապըշտապ
Մըտեալ՝ յերկիր խոնարհի՝ յահ և 'ի դող սարսռագին.
Ցիս, տէր արքայ, ասէ նա. օտարածինք ալեզարդք
Եւ յոքնաթիւ ըսպասեակք, դաս ոստանկաց ընդ նոսա,
Անկեալ յուղի, զոր պատմեն բանքն և տարազ ըզգեստուց,
Ցարևելից 'ի ծայրից՝ ուր արեգակըն ծագէ,
Գան հարցանեն խընդրելով յաղմըկայոյզ ոստանիս՝
Իսրայելեանք, ո՞ւր իցէ մանուկ արքայդ նորածին։

Զոյգ ընդ բանին երևին՝ պատկառելիք հասակաւ՝
Երեք ըզգօն իմաստուն իշխանապերճ թագաւորք,
Քաջահըմուտ առաջնորդք ժողովրդոց, և ասեն.
Ընդ արևելս ամբարձաւ աստըղ մի նոր, զոր աչք մեր
Վարժք յընթեռնուլ ընդ եթեր զերեսս երկնից՝ ոչ տեսին
Բնաւ ընդ կապոյտն հինաւուրց փողփողենէջ շողշողել։
Խաւարէին առ նովաւ արփիք երկնից համասփիւռ,
Զի լոյսն ուղփեան նորընծայ փոխէր 'ի տիւ ըզգիշեր.
Ցընթացսն 'ի ճեմս 'ի բարձանց պայծառափայլ կամարին՝
Լուսաշաւիղ ճանապարհ մեզ հորդէին նըշոյլք իւր.
Ընդ երեկոյս հանապազ վերամբառնայր բարձրա՛նդէտ,

digitised by A.R.A.R.@

Եւ մեք նըմին հետեեալ առ Իսրայէլ եկաք կոյս։
Անպատրըւակ տեսանողք հանդերձելոյն՝ նահապետք,
Գուշակեցին մեզ այսպէս զաստղ արքային արքայից,
Ոյր 'ի խնդիր եկեալ կամք։ Մատեանք դարուց անցելոց
Յայտնաբարբառ քարոզեն՝ ոյց անսարատն իցեն աչք,
Թէ ծագեսցի գաւազան բարեբաստիկն 'ի Յուդա՝
Յորմէ աշխարհ համօրէն երբեմն յաւուրց վարեսցի։
Մեզ ըզքաղաքն ասացէք, ըզհոյակապն արքունիս,
Յուսկեզինիկն ուր յորրանս ծըմտի վեհազըն մանուկ․
Զի յլին յոտըս խոնարհ Շօշ, Պալմիրա և Սաբա
Ընծայեսցեն 'ի մեր ձեռս ոսկի՝ կընդրուկ և զըմուռս։

Այսպէս ըզգօնն Արևելք աւանդապահ քաջուշիմ
Խորհըրդազգեաց ճոխութեանց անճառ դասուց Եդեմին,
Եւ երկնաւոր գըրութեանց թարգման մըտացն իմաստից
Մոգուց իւրոց բերանով կայ 'ի խնդիր Աստուծոյ։ —
Անդ նախ արքայն անվըրդով յաւերժութիւն իւր վըստահ,
Ապա ընդ հուպ զայրագին քըստեալ ըզյօնսըն ցասմամբ՝
Ըզվարդապետս հարցանէ և զերիցունս առ իւրև։
Նոքա խկոյն՝ Ընթեռնումք 'ի հին մատեանըս նախնեաց՝
Ուրախ լեր դու Բեթլեհէմ սակաւաւորդ յոյժ յորդիս․
Ոչ 'ի քաղաքըս Յուդայ կըրտսերագոյն իցես դու․
Ի քոյդ ծոցոյ ծագեսցի արժանափառ ոք իշխան
Որ վարեսցէ ըզՍիոն արդարադատ իրաւամբ։
Ի Բեթլեհէմ արդ, արքայ, ըստ կամս տըրանց նենգաւոր
Մարթի մանկան սընանել՝ սուտ նըշանօք կեղծ 'ի կեղծս․
Դու 'ի պահել յանդորրու ըզժողովուրդըդ խաղաղ՝
Կա՛լ վրիժառու ակն արթուն 'ի զգուշանալ քաղաքիս։

Եւ ըզճակատն անթափանց մանըր քըննեալ զարքային
Գիտեն զըղձիցըն բողբոջ զոր 'ի չընթել կան պատրաստ։

Անդ թագաւորըն լուռ կայ․ ոչ երևի տակաւին
Երկիւղախառըն զայրոյթ մոլեգնութեան յերեսս իւր․
Աստուածակամ ըզվըճիռն ունայն և սին համարեալ՝
Զամբոխախառով սըրտին յոյզս ապախտ առնել ձևանայ։

Ալ փակեալ այն ինչ ըզգիրն յառնէ յոտին կայ անդ ոք
Զարագուշակ պաշտօնեայ՝ մեքենայող դառնութեան․
Ո՛վ թագաւոր, յաւիտեան․ հըսկողք անդուլ անդադար,
Հետաքննինք իմանալ զանխուլ ըզքէն խօսեցեալս,
Ալ ընդ այլոյ իմըն շաւիղ 'ի խաժամուժըն լըւան․
Շըշունջ 'ի դուրս ոստուցեալ դ՝ ահեղ որմունըս բանտից,
Կոծ սատարաց խեռելոց ընդ հարուածովք թոպամահք,
Շըշունջ փոշւոյ որ դ՝ ոտիւքդ էր քո կոխան խաղալիկ,
Շըշունջ զաղիր մուրողաց և վատշըւէր բորոտից,
Մատաղերամ մանկըտւով և կանանի շուրջ զիւրեամբք,
Ճանապարհաց 'ի զըլուխս հեղգ և անգործ բազմելոց,
Եւ չաղակրատ վէս հովուաց շաղփաղփողաց լեզուագար՝
Որք ընդ երեկս եկակոչ 'ի հեռարձակ ընթացից
Առնեն անխուլ հրաւիրանս միմեանց աղբերց առընթեր․

digitised by A.R.A.R.@

Զոյնք անոպայ ձըկնորսաց, տըգէտ նաւազն որերոյ,
Եւ հեծութիւնք անբաժանք հառաչախառն 'ի ծըմտից,
Զայնք վարանեալ օտարաց եկաւորաց բազմամբոխ.
Բանք չըշընջեալք 'ի բանտից մինչև 'ի հիւղ տընանկին,
Զի արք անսուրբք և անարգք, կասկածելիք և վատթարք,
Բաժանակից են միմեանց զազատութիւն ողջունել.
Զի մըռընչէ ձերբակալն 'ի բաց մեկնեալ 'ի տեառնէն,
Մօտ է առ դուրս ասելով օրն յոր արքայս մեր ծընցի.

Բըռնաւորին հինաւուրց արխնացայտ աչք վառեալ,
Եւ ըմբըռնեալ յերկիւղ մեծ քըսմնասարսուռ մոլեգին.
Կապուտակեալ երեսօք, փըքոյուռոյց խրոխտ ուլամբ,
Խածանելով ըզշըրթունսն իւր չըւայտոտս 'ի զեղխանս,
Եւ զարկուցեալ ընդ յատակն ըզզաւազանն ոսկեղէն,
Գաղանաբար սաստկութեամբ վայրենազինըս գոչէ.
« Ո՛ն գիտասցէ Հրէաստան զի դեռ իշխէ Հերովդէս։
Երկիր տածող Բեթլեհէմ ապըստամբող նենգողաց,
Կոտորեցից զորդիս քոյ՝ ըզկաթընկերսն 'ի գըրկիդ.
Երթայք առ ոտըն հարէք, տուք երկաթոյ սրախողխող
Զարու մանկունս անդ ծընեալս՝ յերկեմենից 'ի խոնարհ.
Եւ մըխեսցի սուր 'ի քնին հետազօտել զարգանդ մարց
Վաղամեռիկ առ որդւովք կոտորելոց նորածնունդ »։

## Բ

Շուրջ ընդ ոստանն արձագանգք թաւալէին այսց բանից,
Արիւնազանգ իբր ըզկառս՝ բիւրաւորաց 'ի բերան,
Արք հողագործք մինչ անդուստ ելեալ արտաքս ըստ Բեթլէմ,
Դարձ 'ի վաստակ առնէին՝ բարեբանեալ յերգ զԱստուած.
Երկնանըւագ տաւիղք յօգս, աներևոյթ ձայնք վերին
Ընդ ծառուղին 'ի բարձանց՝ նոցին լինին երգակից.

Ո՛վ գիշերոյն աւետեաց, գիշեր սիրոյ և հրաշից.
Գառանցս 'ի նինջ առընթեր կայաք անքուն 'ի հըսկման,
Շուրջանակի առ հըրովք մեք տաւաղեալ 'ի լերին,
Ունկըն եդեալ 'ի լըսել ըզհին զըրոյցըս ծերոց,
Զհայրն հաւատոց և զՅակոբ և զմեծ հովիւըն Մովսէս,
Ընդ անապատն ընթացեալ աւետաքանչն 'ի յերկիր.
Եւ ըզԴաւիթ թագաւոր պարսաքարանց, և յազգէն
Անմահական ըզմանուկն, Իսրայելի փըրկութիւն։
Եւ ահա երգք քաղցրաձայն ընդ միջեցին ըզմեր խօսս.
Նըշոյլք լուսոյ տեղային փայլակնացայտ ընդ մացառս,
Եւ մինչ երկնից 'ի սպառուած խոպանաստանն հըրդեհեալ՝
Շուրջ յամենուստ պարփակէր ըզմեզ լուսոյն Աստուծոյ,
Համախըմբեալ ընդ այեր գառք գըւարթնոց հոյլ 'ի հոյլ
Հոգեզինաց հրեշտակաց՝ ամենասփիւռ երևեալք,
Գային 'ի դուրս 'ի մայրեաց, յաղբերականց և ժայռից,
Մակաղելոց շուրջ ըզմեօք յանդէոյ ջոկս և հօրան։

digitised by A.R.A.R.@

Անդէն և անդ Եհովայ դասք զօրութեանց յայտնեցան՝
Հընչեցուցեալ յերգոց ձայն բոցաճաճանչ զօդ վերին,
Եւ երգէին ասելով. Փառք 'ի բարձունս Աստուծոյ,
Խաղաղութիւն 'ի յերկիր բարեսիրաց 'ի մարդիկ։
Դիւրախ լերուք և բերկրեալ յուսապատար դուք հովիւք.
Ի Բեթղեհէմ ծնաւ Փրկիչ. և ծանիջիք ըզմանուկն
Եդեալ 'ի մսուր անբանից, աղքատ և հէք իբր ըղձեղ։
Հոգեզինաց անսացեալ յուղի անկաք իսկ և իսկ
Խընդրել զԾնեալն 'ի Բեթղէմ 'ի խանձարուրս հանգուցեալ։
Տեսաք զմանուկն փրկիչ ազգի մարդկան. կարկառէ
Արտասուախառըն ժըմտիւք ըզփափկիկ ձեռսն անդ առ մեզ.
Հանդէպ նորին 'ի պաշտօն մայրն աղօթէ ծընրադիր.
Այնպէս ամբիծ Մարիամ և հրաշագեղ յաղօթս իւր՝
Զ' ի մայրութիւն զոգցես ընաւ ամենևին չէ փըթթեալ։
Հողմք սաստկաշունչք ցըրտագինք 'ի ներքս 'ի գոմըն շըչեն,
Այլ նորածին տըղայոյն կան պահ արկեալ եզն և էշ.
Եւ պաշտօնեայքն այն ամոք երկըրպագուք իւրովի
Լընուն յիւրեանց շունչ ջերմին զԱստուածըն Բան ցըրտահար։
Եւ մեք հովիւքս եղկելիք երգաբանեալ օրհնութիւնս,
Զօնիմք զանշուք ըզնըւէրս ազգատոհմին ընտրելոյ.
Մեղըր և կաթն և հօփալ մանրիկ, և գառն ըսպիտակ,
Արմաւ, ծաղկունըս դաշտի, թի՜մ և գալար անանուխ.
Որովք լընումք և օծեմք անուշաբոյր զյարդն և խար։
Օրհնեալ է Տէր և գովեալ՝ որ մեզ շնորհեաց տեսանել
Զարքայն աւուրց բարութեանց՝ յորոյ յուսոյն կայաք վիրկք.
Օրհնեալ լիցի և գովեալ արքայս ծընեալ 'ի մըսուր՝
Որ չարգելու մըտանել անդէորդաց յիւրն 'ի տուն։

Վա՜շ երջանիկ դուք հովիւք. ձեզ յայտնեցաւ առաջին
Աստուածայինըն մանուկ և ցանկալին խոստացեալ։
Մարդիկ ուսեալք՝ ոյց աշխարհ ունկըն դընէ պանծանօք,
Զաստղըն յաշաց կորուսեալ՝ զելս ընթացիցն հարցանեն.
Եւ օրինաց վարդապետք, թափուրք սըրտին 'ի տրոփմանց,
Ըզվրիպակաւ ընթերցեալ մատեանսն առնեն առաջի։
Ընդդիմամարտ թագաւորք ընդդէմ նորոյ արքայիս՝
Դահճաց հրաման տան պատուէր, ըզհին սուսերան ըշկահեալ։
Միայն ձեր սակս, ո՛ հովիւք, ուղիղք սըրտիւք և անկեղծք,
Տեսանողք և ձայնիւ լըցաւ զեղաւ անապատն.
Ձեզ էր միայն ունկըն սուրբ մատուցանել սեռն և սերտ,
Համայնասփիւռ 'ի յերկին օրհներգութեանց զըւարթնոյ.
Եւ յորորանն աղքատին առաջնորդեալ 'ի նոցունց
Դուք նախ զըտիք առաջին զԱստուածըն Բան նորընծայ։

Գ

Կատարեցաւ արդ հրամանդ, ո՜վ Թագաւոր. ուր ուրեմն
Անցցէ ցասումնդ և երկիւղ հեղմամբ արեան եղկելեաց։
Ի Հրէաստան դեռ խուղէ դահիճն հըսկող յարարթուն
Ըզմաղապուր խանձարուրս 'ի հրոսակէն խուժելոյ։

digitised by A.R.A.R.@

Ոչ Թարթարուրն օթեւան, ոչ մեծամուր աշտարակք,
Եւ ոչ մարթանք հնարագէտ, կամ՝ մոլեալ մարց գեր կառաչ՝
Ըզկեանս որդւոց չնորհեցին, զի բարձցի խէթ կասկածից.
Երկաթ 'ի ծոցըս ծընգեալ ծրարեաց ըզծիլս 'ի ծագել.
Եւ գեռ զանխուլ յարգելան՝ ըզթանգուզեալս 'ի ծածուկ,
Գըտցէ հըրգեհ մեծածախ և լափեսցէ մինչ խապառ.
Վաղահասուկ զինչ պըտուղս ուռճասաղարթ յոստ ջախջախ
Արիւն նոցին խառն ընդ կաթն առ անդ ցայտէ ընդ որմունս,
Ի հրապարակս՝ ընդ գաւիթս և՝ մանուածոյ ընդ փողոցս
Կուտին նըշխարք կոտորոց քընքուշ գառանցըն՝ փափկիկ.

Զայն 'ի Հռամա զուժեաց անդ, լըլումն յայնժամ և աշխար,
Կանխածանօթ ըստ ասից գուշակութեան ձայն ողբոց.
Եւ ծիգ անհատ ճիչ կոծոյն ծագաց 'ի ծագս հոլովեալ
Եւ մինչ 'ի խորս անձաւին մարգարէին յունկն եհաս.
Լայր Հըռաքէլ զիւր որդիս. ոչ կամեցար երբէք, մա՛յր,
Մըխիթարանս՝ յանձն առնուլ, բարձեալ նոցին միանգամ։

Անդ լուսեղէնք զոյգ ըզցայգն ելեալ առ՝ որմունս ողբալիս
Հանգունատիպ զոյգ առհմից ցուցանէին ճանապարհ.
Ընդ այլ և այլ գնացս ուղւոյ փըրկեալ զանձինս և զորդիս,
Ցըստուերամած գիշերին ամոլքն ընտրեալք փախչէին.
Միոյն մանուկ մօրն 'ի գիրկս ամենագեղ հանգուցեալ
Ցաստուածահրաշ ճակատուն նըշոյլս հեղու յիւրըն ծնող.
Մանուկն է սա զոր Փըրկիչ առձայնեցին Թագաւորք,
Եւ անդէորդք փութացեալք սիրայորդորք անդր 'ի գոմ։
Ընթանային յԵգիպտոս, երթալ յերկիրն իմաստնոց,
Որ առլըցաւ գիտութեամբ զարուց աւուրց վաղեմի.
Ուր Ցունաստան մեծաճոխ զանձըս ըփռեաց լիազեղ
Բանից սըրբոց և ուսմանց՝ ուստի լըցաւըն երբեմն։
Միւսն հասակաւ ծանրացեալ և խըստակրօն երեսօք,
Նըմանատիպ իւր որդւով երկրածընունդ զաւակաց
Առ անապատըն մօտէր՝ գուշակութեանց օթարան,
Վայր Նըւիրան ծըխակէզ մըշտաբորբոք պատգամաց,
Եռոտանի ծըխաշունչ ազդեցութեանց միշտ չընչման
Եւ վառարան՝ ուր մըխի, յաւուրն իւրում մեռանել
Ծածկեալ ըզհետսն առ 'ի մէնջ Ոգի Նախկին սերընդոց.
Որ հաւ 'ի հրոյն Նորածին վերաբուսեալ Թևածէ
Ցամանակաց հոլովմունս վարել զուղին անըսպառ։

Թրգմ. Հ. Գ. Ն. Տը Լաւրոս

digitised by A.R.A.R.@